

«Տիրեցուցից ձեզ մարդիկ՝ զժողովուրդն իմ Իսրայէլ», ԼԶ, 12. այլ օրինակ եւ յոյն՝ սիրեցուցից. Հայկզ. ի Տիրեցուցանեմ²⁴:

Ղուկաս

«Հարիւր եւ վաթսուն ասպարիսաւ», ԻԴ, 13²⁵:

Թուղթ Յակոբու

«Լէզու հուր՝ գարդ անիրաւութեան», Գ, 6. պիտի աշխարհ. տե՛ս Իմ. Սող., ԺԸ, 24²⁶:

²⁴ ՆՀԲ՝ «Իսկ Եզեկ. ԼԶ. 12, Տիրեցուցից, ըստ այլ ձձ. եւ յն. սերեցից»: ՍԳ 1895՝ «երբ. գնացուցից ի վերայ ձեր»:

²⁵ Նորայրն իր դիտողութիւնը չի թողել: ՍԳ 1895՝ «Բազումք, վաթսուն»: Վաթսուն եւ հարիւր վաթսուն երկու տարբեր թուերը կան նաեւ յուն. 22-ում:

²⁶ ՍԳ 1895՝ «Կամ, աշխարհ»: Իմ. Սող. ԺԸ 24 «Քանզի ի պճղնաւոր հանդերձին էր ամենայն աշխարհ»:

Բ թուղթ առ Տիմոթէոս

«Կրեսկէս ի Գալիլեա», Դ, 10. յոյն՝ *Κρησκαγς εις Γαλατταν*²⁷:

Յայտնութիւն

«Եղեգնաբար», ԻԱ, 19²⁸:

«Եկն Տէր Յիսուս Գրիստոս», ԻԲ, 21. յոյն՝ «*Ξρχου, κϋριε Ἰησοϋ*»²⁹:

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻԶԱՆԴԱՅԻ

²⁷ ՍԳ 1895՝ «Ի Յունիս, բազումք՝ ի Գաղատիա. ոմանք՝ ի Գալիլա»:

²⁸ Եզեկ. ԻԸ, 13-ում Նորայրն արդէն սրբագրել է այս սխալը. ՍԳ 1895՝ եղեգնաբար ուղիղ ձեւով:

²⁹ ՍԳ 1895, տուն 20՝ «...ե՛կ, Տէր Յիսուս Գրիստոս», որի վերջին բառը «Ի Յունիս պակասէ», իսկ ե՛կ-ը համապատասխանում է միւս թարգմանութիւններին:

ԸՆԴԴԵՄ ԿԱՐԻՆԵՐԵԱՆՑ՝

4 Փետրուար 1902

Մովսէս Խորենացի կեցեալ է ի դարսն Ե—Ձ (առաջին ամբ Ձ դարուն), եւ մատենագիրք Ձ, է, Ը դարուց առնուն ի Խորենացւոյ:

Վեցերորդ դար

1. «Ձմեղանս յանձն առնում» (Գլուխք Բ Թագ., ԼԱ, 271). Խորենացի, Պատմութիւն

¹ Նորայր Ն. Բիւզանդացու այս համառօտ գրութեան անտիպ է, որի 11 մեծագիր էլ ձեռագիրը պահուում է նրա դիւանում՝ Շուշիի Գէօթերորդ քաղաքի համալսարանի կենտրոնական գրադարանի ձեռագրերի բաժնում. գրքերի բաժնում է նրա անձնական գրադարանը: Անտիպի տեղն է՝ ԹԳԹ. 4:0, վաւ. 10:12: Յատակ եւ մարդու գրութեան միայն 1-ին էջը, մնացածը արագ գրութեան սեղանի վրայ է, ուր ըստ հեղինակի ա, բ, գ, դ, զ, զուգումներ՝ պէտք էր կատարել հատուածներ տեղափոխութիւն (Վրթանէս Քերթոզ), որ կատարել ենք, մնացածը տպելով առանց էական փոփոխութեան: Գրութեանը գիրը թեւեւ չի դարձնելու համար մտցրել ենք ձեւային բարելաւումներ. որոշ յապաւումներ բացում, կէտադրութեան արդիականացում, առատ միջակէտերի փոխարինում վերջակէտերով եւ ստորակէտերով, աղբիւրների փակադժում, ընդգծումներ, []-ներէ մէջ լրացումներ, մանաւանդ ուր հեղինակը յետագայ ճշգրտումներէ հա-

Կոր. Վրտ., 429, զոր ինչ գրեմ զժամանակէ քիւն, Բ, ծե, 286. Գ, կզ, 565²: Տե՛ս յիմ

մար բաց տեղ էր թողել. նա ձեռքում ունեցել է Խորենացու Պատմութեան վեներտիկեան հրատարակութիւնները, մենք լրացումները կատարեցինք 1913 թ. (Տփղիս) գիտա-ընկերակցից: Էջատակի ծանօթագրութիւնները, բացի մէկից, մերն են:

Նորայրը գրութեան վերնագրից առաջ գրել է. «Կոմիտաս կթ. յէ դարու, եւ Մ. Խորենացւոյ Ներբողեանն Հոփիսիմեանց»:

Ինչպէս յայտնի է, Նորայրը մի քանի անգամ անդրադարձել է Մովսէս Խորենացուն, յատկապէս «Հայերէն հիմ գրականութեան խնդիրներ. Մովսէս Խորենացի» ուսումնասիրութեան մէջ (Մշակ, 1898—1899), ընդգէմ Քրանտիացի հայագէտ եւ արեւելագէտ Օգիւստ Կարիէրի (1838—1902) եւ նրա կարծեկիցներէ, որոնք Պատմաճօրը համարում էին Լ—Թ դարերի հեղինակ. սրանով է բացատրուում գրութեան «Ընդդէմ Կարիէրեանց» վերնագիրը:

Նորայրը մի անգամ եւս զարմացնում է ընթերցողին հին եւ միջնադարեան հայերէն բնագրերի իր խոր գիտակութեամբ եւ զարմանալի յիշողութեամբ: Նրա ժամանակ հայերէն հին գրականութեան համաբարձանների չկային: (Մարտիրոս Մինասեան):

² Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Մ. Յարութիւնեան, Տփղիս, 1913 (ՄԽ), էջ 185, տող 15 եւ 354. 13 «գմեանս յանձն առեալ»:

Թարգմանութեան Նախադրութեանց Հին եւ Նոր Կտակարանաց³:

2. Բազարատ ոմն Հայ, ի ժամանակի մարզպանացն Պարսից (այս ինքն յաման 514—608, Ալիշան, Այրարատ, 561 ա), ք թղթին իւրում գրելոյ յԱթէնք քաղաքէ առ բարեկամ իւր Սուրէն որ էր յաշխարհին Հայոց, յիշէ զՊատերազմն (Հայկայ) ընդ Բելայ եւ գիւրեզմանս, զԱրամ եւ զՆիւբար: Ուրեմն ի Ձ դարուն կայր արդէն Պատմութիւն Հայոց Խորենացւոյ: Տե՛ս զԹարգմանութիւն բանիցն Բազարատայ ի Բազմավիպի, 1844, 202 ր—203 ա, ի ճառին «Յառաջադիմութիւն ազգային», զոր գրեալ է Հ. Ստեփանոս Վ. Եագրճեան, որպէս նշանակի ի Յանկի եռահատոր Բազմավիպին (1843, 1844, 1845), յերես 382 ա: Գտի զայս ի 21 Հոկտեմբերի 1901⁴:

Իսկ ուր ասէ Բազարատ, անդ, 203 ա, «Հասեալ յամուրն Անի ի շիրմս արչակունի Թաղաւորացն», տե՛ս Խոր., Գ, իէ, 450⁵: Մարթի թէ զիտէր զայդ Բազարատ եւ ի Պատմութեան Գաւառոսի Բիւզանդայ:

3. Յովհաննէս կթ. (Բ Գաբեղենցի), որ եկաց կաթուղիկոս յաման 557—574 (տե՛ս յիմ⁶ Գիրք քրթոց, 81). «Եւ ըստ նոցունց (Սրբոցն Գրիգորի եւ Արիստակիսի)՝ հոգեկիր վարդապետն եւ քարգմանիչք, որ յԱղեփսանդր եւ յայլ յայտնի քաղաքս վար-

³ Իր Կորին վարդապետ եւ նորին քարգմանութիւնք աշխատութեան (Թիֆլիս, 1900) նշուած էջում Նորայրը գրել է. «Ժամանակ գրութեան Նախադրութեանց եւ Գլխակարգութեանց թէ Հին Կտակարանին եւ թէ Նորոյն՝ թուի կատարած Հինգերորդ դարուն կամ սկիզբն Վեցերորդին, յորում վաղուց խմբեալ էր Առաջին Աշակերտաց անման Հայ լեզուն, եւ կը տիրէր նորահնար Հայերէնն Երկրորդ Աշակերտաց: Տե՛ս զբաւան Ապագայ, (Նխ. Ծնն. — Գլ. Թուոց, ԼԲ), Ապացոյց, (Նխ. Բ. Կոր.)»:

⁴ Այս կարգի նշումներ շատ կան Նորայրի անտիպ գործերում, ինչպէս զարձեալ սոյն գրութեան վերջում: Նա սովորութիւն է ունեցել նաեւ թուագրել իր գրածները:

⁵ ՄԽ, 288. 18—21՝ «Իսկ սպարապետն Պարսից եկեալ ի Հայս՝ ի ձեռնտու լինելոյ նախարարացն առնու զամուրն Անի եւ գերէ զամենայն զանձս արքունի որ ի նմա եւ զոսկերս թագաւորացն»:

⁶ Յիմ, այսինքն իրեն պատկանող օրինակում, որն այսօր նրա գրադարանում է: Նորայրը շատ արժէքաւոր նշումներ, գիտողութիւններ ու սրբագրութիւններ է թողել իր սեփական գրքերի լուսանցքներում եւ ազատ էջերում:

ժեալ, ոչ աւելիս եւ նորս ինչ թարգմանեցին, եւ ոչ ընկալան, եւ ոչ մեզ աւանդեցին» (Յովհաննու Հայոց կաթուղիկոսի «Ի Յայտնութիւն Գրիստոսի», Գիրք քրթոց, 88—89):

4. Նոյնն. «Ի հաւատարիմ մարդկանց լուաք» (Գիրք քրթոց, 79). Խոր. «Լուայ ի հաւատարիմ արանց» (Գ, կէ, 569). «Լուայ ի հաւատարիմ մարդոց» (Մ. Կաղ., Ա, 278). «Լուեալ ի հաւատարիմ մարդոց» (Ուխտանէս, Բ, դ, 14). Պետրոս Քերթոզ, եպիսկոպոս Սիւնեաց, աշակերտ Մ. Խորենացւոյ, Յովսիա, «Պատմութիւն երանելեացն Թաթլոյ եւ Գիւտի եւ Թովմասու եւ Վարոսի ճգնաւորաց Գրիստոսի» (Ալիշան, Այրարատ, 46 ր, 52 ա. տե՛ս Պատառիկս, անդ, 50 ա, ր). Գրիգոր Արծրունեաց եպիսկոպոս, Եզրաս Անդեղացի, աշակերտ Մովսեսի եպիսկոպոսի Բազրեանդայ՝ «զդասս ճարտասանիցն բաղմայոյց». Սամուէլ Անեցի, 73, առեալ յԱսողկանէ, Բ, ր, 82:

Վեցերորդ-Երեքերորդ դարք

5⁷. Մմբատ Վրկան Մարզպան ի Թղթին առ Կիւրիոն Վրաց կաթուղիկոս. «Մեր եւ այդ աշխարհի ազատ որերոյ, թէպէտ արիւն եւ հարազատութիւն եւ վստահ լինել (լինէր) մեզ որպէս յերզումն ինչ՝ ա՛յդ սուրբ վկայարանդ որ ի Յուրտաւայ պատուական եկեղեցիդ հաստատեցաւ, եւ պաշտանդ եւ կարգը հաշիւն որ ի ձեր միջի էր» (Գիրք քրթոց, 169. Ուխտանէս, Բ, 94): «Վկայարանդ, Յուրտաւայ որ ի ձեր միջի էր» են ըստ Ուխտանէսի, ուր Գիրք քրթոցն ունի «Վկայարան, Յուրտաւայ, հայերէն ի ձեր միջի էր». Իսկ ուր Ուխտանէս գրէ «ազատեայ, եկեղեցիդ հայրենի որ ի ձեր միջի էր», Գիրք քրթոցն ունի «ազատ որերոյ, եկեղեցիդ հաստատեցաւ, եւ պաշտանդ եւ կարգը հայրենի ի ձեր միջի էր»: Այս Թուղթ Մմբատայ առ Կիւրիոն գրեալ է իսկ եւ իսկ յետ ձեռնագրութեան Արրահամու Ա. Աղբաթանեցւոյ ի կաթուղիկոսութիւն, որ եղեւ յամին 606 կամ 607 (Ուխտ., Բ, 62):

⁷ Գրութեանը բնագրում այս թուահամարը 3 է. ինչպէս ձեռագրից էլ երեւում է, Նորայրը յետոյ է աւելացրել նախորդող թիւ 3 եւ 4 հատուածները, բայց նախկին համարակալումը մնացել է. ուստի այստեղ եւ շար. մէջ փոխեցինք ըստ անհրաժեշտութեան:

Սորենացի՝ «արիւն եւ հարազատութիւն Արտաշիսի» (Բ, ԻԷ, 220). — «արիւն իմ եւ հարազատութիւն» (ԼԸ, 251). — «գարիւնդ քն եւ գհարազատութիւն» (Զ. Իսկ տպ. հարազատութիւն) (ԽԸ, 259). — «Դու արիւն իմ եւ հարազատութիւն» (Գ, ԼԸ, 466). — «արիւն իմ եւ հարազատութիւն» (ԽԸ, 504). — «Զի արիւն իմ եւ հարազատութիւն, զբարին քո խոկալ (Զ՝ ընկալ) ասեմ» (ԿԸ, 555):

6. Վրթանէս Գերթող ի Թղթին առ Մովսէս եպիսկոպոս Յուրտաւայ. «Յայնժամ եկեղեցիք ամենայն արեամբ լինէին շաղախեալք, եւ մետաղք եւ կղզիք՝ կապանաւորաւք լցեալք» (Գիրք Բղթոց, 142), Ուխտանէս, Բ, 51, ուր զրի «Եւ մետաղք, եւ բանտք, եւ զանազան հնարիւք տանջանք, եւ կղզիք կապանաւորաւք լցեալք»: Ի Թղթոյ աստի Վրթանիսի առնու եւ Մովսէս եպիսկոպոս Յուրտաւայ յիւրում զբուրեան Պատմառք Զորրորդ ժողովոյն. «Եւ ասլա յայնժամ եկեղեցիք ամենայն արեամբ շաղախեալ լինին, եւ մետաղք եւ կղզիք կապանաւորաւք լցեալք» (Գիրք Բղթոց, 120):

Սորենացի՝ մետաղք. «Եւ տանել ... հանդերձ երկաթի կապանաւք, զնել ի մետաղս», ՄԽ, 237. 16—17. «Արտասահմանեաց ի մետաղս», 240. 17. «Արտասահմանեալ կին ի մետաղս», 297. 12: Մ. Մ.]:

7. Վրթանէս Գերթող ի շառին ընդդէմ Պատկերամարտաց, 330—333. «Կամ զի՞նչ արդեւք ասիցես զպատկեր Տեառն՝ զոր Անան (տպ. աստուածային) հաւատարիմ թաղաւորին (ն) Արզարու նկարեալ յանդիման Քրիստոսի տեսութեամբ իսկ, գոր եւ այժմ ասեմ գոյ ի մեծ եկեղեցւոյն Ուռնայու» (300):

Սորենացի՝ «Չայս թուղթ երեք Անան (Զ՝ Ենան) սուրհանգակ Արզարու, ընդ որում եւ զկենդանագրութիւն Փրկչական պատկերին, որ կայ յեղեցացոց քաղաքին մինչեւ ցայսար ժամանակի» (Բ, ԼԸ, 230). «Եւ զարձեալ (Հոսիսիմեանց) անտի (ի Գեթսեմանեայ) խնդութեամբ եկին յեղեցիաքաղաք, եւ երկրպագեալք Փրկչական պատկերին՝ եւ լցան ուրախութեամբ, համարեցան տեսեալ զԲանն մարմին եղեալ» (Սոր.,

Պտմ. Հոսիս., 299): Սորենացի զնացեալ է «յեղեսացւոցն քաղաք» (Գ, ԿԸ, 548):

«ՉԱնան հաւատարիմ իւր» (Սոր., Բ, Լ, 226): Վրթանէս Գերթող թերեւս զիտէր զայս ի Լարուբնայէ. «ՉԱնան հաւատարիմ իւր» (2). — «ի ձեռն Անանայ հաւատարմի» (4). — «Ասէ զԱնան հաւատարիմ արքային» (5). — «Մարիհար եւ Շամչազարամ եւ Անան՝ հաւատարիմ արքային» (3):

Նոյնպէս զնկարել Անանայ զպատկեր Տեառն՝ Վրթանէս Գերթող զիտէր թերեւս ի Լարուբնայէ. «Եւ լուեալ զայս ամենայն Անան՝ զոր ասաց ցնա Յիսուս, առեալ նկարեաց զպատկերն Յիսուսի ընտիր դեղովք, քանզի արուեստաւոր թաղաւորին էր. եւ բերեալ մատոյց Արզարու թաղաւորի տեսան իւրում: Եւ իրբեւ ետես Արզար թաղաւոր զպատկերն Յիսուսի, ընկալաւ զնա մեծաւ ուրախութեամբ եւ եղ զնա պատուով ի սենեկի իւրում յապարանս իւր» (6):

Այլ թէ այս պատկեր էր առ Վրթանիսի ի մեծ եկեղեցւոյն Ուռնայու, (զորմէ ոչինչ ասէ Լարուբնայ), Վրթանէս Գերթող թուի առեալ ի Պատմութեանն Սորենացւոյ:

Ի Սորենացւոյ Պատմութեանն թուի առեալ եւ զրիչն Վկայաբանութեան Վահանայ Գողթնացւոյ, յամին 745 կամ 746 (տե՛ս Սովետիկ Հայկական, ԺԳ, 55, 57—58). «Եւ հասեալ (Վահանայ Գողթնացւոյ) ի մայրաքաղաքն Ուռնայ, երկրպագէր Փրկչական պատկերին, խնդրելով զթողութիւն տղայական անդիտութեանն» (Սով. Հայկ., ԺԳ, 34) = «զկենդանագրութիւն Փրկչական պատկերին» (Սոր., Պտմ., [ՄԽ 150]). — «Երկրպագեալք Փրկչական պատկերին» (Սոր., Պտմ. Հոսիս.):

Իսկ Յովհաննէս կաթողիկոս, 21—22, բառ առ բառ ընդօրինակէ ի Պատմութեանն Սորենացւոյ. «... որ կայ մինչեւ ցայսար ժամանակի յեղեսացւոց քաղաքի»:

Միխայէլ Ասորի, 105—106¹⁰, այսպէս կը պատմէ զնկարումն կենդանագրի Փրկչին. «Յիննեստան ամին Տիրեբեայ կայսեր առաքեաց Արզար Հայոց արքայն (Զ՝ «Արզար

⁹ «Յեղեսացւոցն հասանէաք քաղաք» (ՄԽ, 344. 6):

¹⁰ Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորաց պատրիարքի, Երուսաղէմ, 1871:

⁸ []-ները մէջ առնուած լրացումը մեզանից է: (Մ. Մ.):

արքայ Հայոց եւ Ասորուց) առ Յիսուս թուղթ աղաչանաց ի ձեռն Անանիայի (Անանիէի) հաւատարմին իւրոյ, աշխատել եւ դալ առ նա, («Եւ բժշկել զնա ի ցաւոցն որ դիպեալ էր նմա ի Պարսից յառաջ քան զԵթն ամ» Զ. Թուի առեալ ի Սորենացւոյ, Բ, Լ, 227), եւ լինել թագաւորակից նմա. եւ հաւատաց ի նա եւ երկրպագեաց նմա յառաջ քան զչարչարանն: Եւ Յիսուս զրեաց պատասխանի եւ երանեաց զԱրզար, եւ խոստացաւ յետ յարութեան իւրոյ առաքել նմա քարոզ եւ պատճառ կենաց զմի յաշակերտաց իւրոց: Իսկ նա վասն ջերմութեան սիրոյն զոր ունէր առ Տէր մեր, առաքեաց դարձեալ զՅովհաննէս նկարագրի(1), փոխել եւ բերել զպատկեր նորա, զի գոնեա յայնմանէ վայելեացէ: Եւ զնացեալ Յովհաննէս ոչ կարէր հաւատարել վայելչութեան գեղոյ նորա, այլ եւ փոփոխէր փառաց ի փառս. եւ հիւանայր նկարին: Եւ ասլա ողորմութեան եւ զթողութեան աղբիւրն խնդրեաց զղաստառակն եւ եղ (տպ.՝ ետ) ի վերայ երեսացն. եւ նկարեցաւ տիպն ի հանդերձեղէնն: Եւ էր այս յառաջ քան զչարչարանն քսան եւ չորս աւուրբք. եւ բերաւ եւ տուաւ Արզարու: Եւ մեծամեծ հրաշք եւ սքանչելիք լինէին ի նմանէ, մինչեւ եկն թագէտս առաքեալն»:

8. Վրթանէս Գերթող ի շառին ընդդէմ պատկերամարտաց. «Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի», 330—331. Սորենացի՝ [ՄԽ 95. 13—14 «ազգի մերոյ Լուսաւորչին». նաեւ էջ 205, 212, 220. Մ. Մ.]:

9. Նոյն, անդ, 337. «կարմիր մորթով կազմեալ ... լայնային՝ (Հյկզ. ի Ղափայ՝ զափային) որ յերկրէ բարբարոսացն եկեալ է ի վաճառ»: Տե՛ս Շիկակարմիր մորթ եւ ի Պատմութեան Աղուանից, տպ. Շահնազար, Ա, 152, 153, 160. տե՛ս եւ Տեղեկ. 116դ: Սորենացի՝ «Բանդի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր, լայնային (Զ՝ զափայ) շատ եւ ոսկի բազում տուեալ ի վարձանս, առնու զտիկին աւրիորդն Սաթիկիկ: Այս է ոսկէաւզ շիկափոկ պարանն» (Բ, Ժ., 275): Լայնա.

(1) Մովսէս Սորենացի (Բ. 29) եւ այլք, ասեն եթէ յառաջնում նուազի յառաքել Արզարու զԱնանէ պատուիրեաց նմա հանել եւ զպատկերն Յիսուսի. իսկ զերկրորդ զնալոյն ոչինչ յիշատակեն. եւ անուրջ Յովհաննէս ՚ի Յայսմաւուրս (Օգոս. 16) եւ եթ գտանի յիշատակեալ, թերեւ ՚ի սոյն գրոց Միխայէլի ունեալ: [Հրատարակչի ծան.:]

Վիստոն¹¹, 164, լատիներէն զնեն lacca եւ ասեն ի ծան. 2. «Quid sonet vox լայքայ, qua hic Chorenensis utitur, non satis novimus; sed quum Lach vox Arabica et Persica sit, gummi quoddam declarans, quo res rubro colore tinguntur, non dubitavimus Laccam, ut recentiores appellant, in versione nostra ponere»: Զ Կարենեանցի ամին 1624 ունի զափայտ (= զափա շատ), իսկ Զ ամին 1617 (Լմբ.)՝ լայնայ շատ. տե՛ս անդ, Երես 83. — զափայ Զ Սահահնի (Ն. Մառ), Երես 64 ա. — մի Զ լափայտ. ա՛յլ Զ զափայտ. Սոր. մեծաղբին, 128, Ժ. 3: Պրս. լէֆեա «Շիկակարմիր մորթ» (Պողոսեան)¹². Հիւբշման¹³, Երես 157, անդիտանայ: Պրս. լէֆեա «կարմիր սեկ»¹⁴, գըրմըլի սալսքիեան («Գէորգ»¹⁵). ա՛յլ է պրս. եւ լափ, նչ. 3 ի Գէորգ¹⁵: Էմինեան¹⁶ զնէ գղ. Roussi ա նչ. «լայքա. ոռուսամաշկ. լէօֆ. մօսկօֆ մէշիմի»: Սիալ է լէօֆ, զի այդ է գղ. Laque կամ Gomme laque, իսկ Roussi է ըստ Լիտրէի¹⁷ «Cuir teint en rouge ou en brun», մինչդեռ լափայ կամ զափայ է «մորթ կարմիր»: Նոյն եւ զLaque զնէ «ղայքա» եւն: «Ռուսերէն laïka պատրաստուած շանակաշի է, որից շինում են ձեռնոցներ» (Ստեփանէ, Սոր., Բ տպ.¹⁸, Երես 435, ծան. 405):

10. Նոյն, անդ, 341. «Եւ զարձեալ ասէ (Առակողն). «Ծնունդ չար առ արդարս ունիցի (ունի, Ժող., է, 17) զանձն իւր». որպէս եւ զուրդ բարձրացեալ պանծայք, եւ անդուռն թերամով խաւսիք զոր ինչ ոչ է պիտոյ»: Սորենացի՝ «Նոյնպէս եւ (Զ. Իսկ տպ.

¹¹ Մովսէսի հարեմացւոյ Պատմութիւն եւ Աշխարհացոյց, հայերէն-լատիներէն, Լոնդոն, 1736, Ուխտանեան եղբայրների հրատ.:

¹² Հ. Յ. Պողոսեան, Բաւարացի համալսարանի հայերէն-տառակերէն, Վիեննա, 1838:

¹³ Hübschmann, Armenische Grammatik, Leipzig, 1897. արդարեւ «Persische Wörter» բաժնում չկայ լայնայ փոխառեալ բառը:

¹⁴ Սեկ՝ «մորթ հարթեալ ի մազոյ եւ կոկեալ» (Ն. Ն. Ռ.):

¹⁵ Գէորգ Դպիր Տէր-Յովհաննիսեան (Պալատեցի), Բաւարացի պարսկերէն ըստ կարգի հայերէն պարսկերէնից, Պոլիս, 1826:

¹⁶ Հ. Սրապիոն Էմինեան, Երեւանի քաղաքի պատմագիտական ինստիտուտի Գաղղիերէն-հայերէն-տառակերէն, Վիեննա, 1871:

¹⁷ E. Littré, Dictionnaire de la langue française, 1863—1873.

¹⁸ Մովսէս հարեմացու Հայկական Պատմութիւն, աշխարհաբար թարգմանեց եւ լուսարանեց Սորէն Մ. Վ. Ստեփանէ, Ս.-Պետերբուրգ, 1889, 1898:

նայնպէս էր եւ) սան նորա (Աւտայի) խորո-
վիրութեամբ, կուսան համեստ որպէս զաւրի-
նաւոր ոք, եւ ոչ ամենեւին ունել (Զ՝ ունե-
լով) անդուռն բերան, նման ա՛յլ (Զ՝ այլոց)
կանանց» (Բ, ճբ, 346) : Ի բանին խորենացող
անդուռն բերան ըսուած է շատախօս կանանց
համար. յունարէն *ἄθροστομος ἄθροσος*
Անդուռն, Qui n'a point de porte: au fig.
Effréné, sans frein, en parlant d'une langue
indiscrete ou bavarde. Եւ *ντομα* բերան, գլ.
Bavard, Indiscret. որ եւ *Ἀθροδύλωσσος* Ան-
դուռն լեզու. իսկ առ Վրթանիսի անդուռն
բերանով նշանակէ «Յանդանարար, լրբա-
բար» :

Կայ Անդուռն բերանով եւ առ ա՛յլ մա-
տենագիրս ի սկզբան Եւթներորդ դարուն.
«Քանզի զյիշատակելին նեստոր անդուռն
բերանով յանդգնի ասել երկուս որդիս, մի
զորդին Աստուծոյ, եւ միւս՝ զ՛ի Մարիամայ
ծնեալն» (Աբրահամ կաթողիկոս Ա Աղբա-
թանեցի, «Թուղթ Շրջադայական», Գիրք
Քրթոց, 192). — «Նոյնպէս եւ երկերիւրքն
որ յեփեսոս ժողովեցան, եւ զամպարիշտն
նեստոր նզովեցին... որ անդուռն բերանով
ասէ. Ոչ է պարտ եւ արժան զՄարիամ Սուրբ
կոյս՝ Աստուածածին խոստովանել, այլ մար-
դածին» (Կոմիտաս կթ., «Թուղթ ի Պարսս»,
Գիրք Քրթոց, 215), որ ի հրապարակելունն
ի 861թ. սպ. Վաղարշապատու, 1894, երես
306, գրեալ է. «որ յանդուռն բերանով ասէ».
— «Եւ թէ հաւանեցին միաւորութիւն խոս-
տովանելով, որպէս էն իսկ, ոչ եւս ա՛յլ հա-
մարձակեցին անդուռն բերանով երկուց
ձայնիւ զաւղանջել» (Սուտ-Մովսէս խորե-
նացի, «Եղծ գրաժանողացն», Գիրք Քրթոց,
27). նոյն եւ ի Սամ. Անեցի, ծան. 11, երեսք
260—261 :

«Ինքեանք գերանալից աչաւք եղեալք՝
դատին միշտ չարաչար բամբասանաւք եւ
անդուռն բերանով զչիղս յանցանաց վարուց
նոցա» (Ն. Շնորհալի, Ընդհ., 39). — «Ո՛վ
թշուառութեանս. այնքան յաչաղանքն գը-

րաւեալ զառաջնորդական զմիտս, որպէս զի
զայսքան իմ զվէրս թողեալ առանց ջանի
բժշկութեան, զայլս անդուռն բերանով նա-
խատեմ. մոռացեալ զՏեառն երգիծանել զայ-
նոսիկ՝ որք գերանովք ջանային (սպ. ջանա-
ցին) զչիղս դատել» (Ն. Լամբրոնացի, Ատե-
նարանութիւն, 171) :

«Աներեսանակ արձակ բերանով» (Եղշ.,
Բ, 29, մեծադիրն).

«Աներեսանակ բերան» (Թէոդ. Քոթ.,
Ընդդէմ Մայրագ., 151).

«Անսանձահար բերան» (Պղատոն, Աւ-
րէնք, Գ, 113).

«Անսաձելի բերանով» (Փիլոն). տե՛ս
Անդուռն եւ ի Հայկզ. :

«Ամենեցուն մեզ յայտնի է» (Նոր.,
Պոս., Ա, գ, 14). «Որպէս ամենեցուն
յայտնի է» (Նոր., Պոս., Ա, ժդ, 72. Բ, դա;
379) : Այլուր՝ «Որպէս ամենեցուն է յայտնի»
(Ա, բ, 10). «Եւ այս յայտնի է ամենեցուն»
(Ա, ե, 25). Վրթանէս Քերթոզ՝ «Այդ ամե-
նեցուն յայտնի է՝ թէ սուտ խաւսիք» (Յա-
ղագս (կամ Ընդդէմ) Պատկերաւարտաց,
339) : Յայլ գիրս. «Որպէս ամենեցուն է քա-
ջայայտ» (Աթանաս՝ Գր. Նազ. Առ որս.՝
Հայկզ. ի Քաջայայտ). — «Ո՛չ ամենեցուն
իցէ քաջայայտ» (Գր. Նազ., Առ որս.).
«Ամենեցուն յայտնի է» (Եղնիկ, [1826], 11).
— «Այն՝ ամենեցուն յայտ է» (անդ., 281).
«Ամենեցուն յայտնի է» (Պիտ., Գ, գ, 381.
Զ, ե, 469. տե՛ս Նոր., Պոս. = Պիտայից
Գիրք) :

«Եւ զի այսպէս է, ամենայն ումեք յայտ
է» (Ոսկ., Մտք., ԺԶ, 25). «Եւ զի այս այս-
պէս է, ամենայն ումեք յայտ է» (անդ., ԺԷ,
272) : Գրեալ էի ի 26 Յունիսի 1912 ի Նոր.,
Պիտ. = Ոսկ. ի համարն «Եւ զի այս այսպէս
է» եւ աստ գրեցի յ9 Մայիսի 1914 :

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻԶԱՆԿԱՑԻ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ՀՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի
Հր. Աճառեանի անուան Լեզուի ինստիտուտի
աւագ գիտական աշխատող, գրաբարի եւ
արեւելահայերէնի մասին աշխատութիւնների
բեղուն հեղինակ Վարդ Դաւթի Առաքելե-
նը 1984 թ. Երեւանում հրատարակել է
Հինգերորդ դարի հայ քարգմանական գրա-
կանութեան լեզուն եւ ոմը ուսումնասիրու-
թիւնը՝ «Ներածութիւն», էջ 5-59, եւ «Բա-
նասաչարք», էջ 60-228 : Ուշադրութեամբ
եւ մեծ հետաքրքրութեամբ կարդացինք, եւ
ահա մեր դիտողութիւնները, եւ ոչ թէ դրա-
խօսութիւնը, քանի որ ընդհանուր դնահա-
տումները միշտ էլ խարուսիկ կողմ ունեն :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրքի վերնագիրը

Սա չի համապատասխանում բովանդա-
կութեանը. էջ 4-ի մատենագիտական տեղե-
կութեան մէջ ասուած է. «Աշխատութիւնը
նուիրուած է հայ անդրանիկ գրքի՝ Աս-
տուածաշնչի լեզուի ու ոճի ուսումնասիրու-
թեանը». հաւանաբար նպատակայարմար չէր
հեղինակի գործածած «Աստուածաշունչ,
Սուրբ գիրք, Սրբազան գիրք» անուանումնե-
րը ցոյց տալ գրքի ակնառու տեղում. սա կա-
րելի է «նրբացուցիչ դէպք յանցանաց» հա-
մարել. բայց մի օր ի՞նչ անուն պիտի տրուի
Աստուածաշնչի քննական եւ համահաւք
հրատարակութեանը, որին սփիւռքահայու-
թիւնը սպասում է Երեւանից :

Գրքի ներքին ձեւաւորումը

Ուշադիր ընթերցողը կը նկատի ծայր
աստիճան թափթփուածութիւն՝ բազմաթիւ
տառասխալներ կամ տպագրական վրիպակ-
ներ մանաւանդ գրաբար բառերում, ան-
հրաժեշտ ընդդժումների կամ շեղատառերի
անհետեւողական գործածութիւն, անհրա-
ժեշտ չափերտների պակաս, բացուող բայց
չփակուող փակագծեր կամ ընդհակառակը,
փոքրատառով սկսուող գրաբար նախադա-
սութիւններ, փոքրատառով սկսուող յատուկ
անուններ, ածանցներ մերթ դժիկով մերթ

առանց դժիկի, ներքին ենթավերնագրերի
բացակայութիւն եւ այլն, որոնք դժուա-
րացնում են գրքի ընթերցումը : Էջերով
ամբողջ բառացանկեր են տրուած (եբրեմն
խախտուած այբբենական կարգով) փոխա-
նակ սիւնակների, մանաւանդ երբ նոյն տա-
ռատեսակով են դրանք եւ հեղինակը խօսքը :
Գրաչարները չհաշուած, հեղինակից բացի
գրքի վրայ ութ հոգի են աշխատել :

Մատենագիտական ցանկի բացակայութիւն

Այս կամ «օգտագործուած գրականու-
թեան» ցանկը կարելի է զանց առնել «գիտա-
մասսայական» դրբոյկներում, բայց ոչ՝ գի-
տական աշխատութիւնների վերջում, ինչպի-
սին է այս մէկը, ուր ոչ մի դրացուցակ չկայ,
մինչդեռ ընթերցանութիւնը ցոյց է տալիս,
որ հեղինակը օգտուել է բառարաններից եւ
աշխատութիւններից, սրանցից լուռ վերցնե-
լով մտքեր ու տեղեկութիւններ : Գրքի էջա-
տակերում յիշատակուած են լոկ մի քանի
գործեր : Նախ պիտի իմանայինք, թէ Ս. Գրքի
ո՛ր հրատարակութիւններն է օգտագործել՝
ՍԳ 1805 (Յովհ. Զոհրապեանի հրատ.),
ՍԳ 1860 (Ար. Բագրատունու հրատ.), կամ
ՍԳ 1895 (Մատ. Գարագաշեանի հրատ. բո-
ղոքական եկեղեցու կանոնով). գործածել է
անշուշտ Համարաբառ հիմ եւ նոր կտակա-
բանաց հսկայական տեղեկատուն, Երուսա-
ղէմ, 1895, Ար. Այտնեանի, Հր. Աճառեանի
եւ ուրիշների թանկագին աշխատութիւննե-
րը, սակայն առանց հեղինակի կամ գրքի
անունը տալու, կամ լոկ գրելով՝ այսինչն
ասում է, մէկ անգամ՝ ըստ այսինչի, սակայն
դարձեալ առանց աշխատութեան վերնագրի
եւ ստոյգ տեղի : Այսպիսով այն տպաւորու-
թիւնն է ստացւում, որ խարուսիկ է, թէ
հեղինակն ամենազէտ է, ոչ միայն գրաբա-
րագէտ, այլեւ յունագէտ, եբրայագէտ ու
ասորագէտ, մինչդեռ նրան անձնապէս եր-
կար ժամանակ ճանաչած լինելով՝ կարող
ենք ասել, որ վերջին երեք լեզուները նրան
ծանօթ չեն, եւ նրա բոլոր տեղեկութիւնները
քաղուածոյ են, սակայն լռելեայն. ահա
անօրինականը եւ վատ օրինակը : Ընթերցողն
իրաւունք ունի ստուգելու նրա արտայայտած